

Արթուր Ս. Ղազարյան

## ԶԱՎԱՐՅԱՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՏԱԳՈՎ՝

**Սոցիալական արդարության թեման դարեր շարունակ գրավել է բազում մտածողների ուշադրությունը:**

Անտիկ շրջանում Պլատոնի, Արիստոտելի և Էպիկուրի աշխատություններում լայնորեն կիրառվում էր «արդարություն» հասկացությունը: Ուսումնասիրելով զարգացած ու բազմամարդ հունական պոլիսները, Պլատոնը դրանք դասակարգել է արդարության և անարդարության սկզբունքների հիման վրա<sup>1</sup>: Ավելի հեռուն գնալով՝ Արիստոտելը տվել է արդարության հետևյալ դասական սահմանումը. «Արդարությունը հավասարությունն է, սակայն միայն հավասարների համար, և հակառակը՝ անարդարությունը միայն անհավասարների համար է»<sup>2</sup>:

Միջնադարում սոցիալական արդարության հիմնահարցին անդրադառնում էին աստվածաբանության դիրքերից: Միջին դարերում սոցիալական արդարությունը մեկնաբանվում էր որպես Աստծո կամքի արտահայտություն, ով «ամենքին գնահատում է ըստ իրենց գործի (արժանիքի)»<sup>3</sup>:

Նոր ժամանակներում աստվածաբանական մոտեցումների փոխարեն առաջ եկան սոցիալական արդարության օգտապաշտական մեկնաբանությունները (Բեկոն, Հոբս, Լոկ, Հրոցիոս, Սպինոզա, Ռուսո<sup>4</sup>): Այս մտածողների կողմից արդարությունը դիտարկվում էր որպես ազատ և արդար մարդկանց միջև համաձայնության արդյունք:

Գերմանացի դասական փիլիսոփա Կանտի կարծիքով՝ սոցիալական արդարությունը ապրիորի է և վերացական<sup>5</sup>, իսկ Հեգելը գտնում էր, որ արդարությունը իրավաքաղաքական երևույթ է<sup>6</sup>:

19-րդ դարի ռուս առաջադեմ մտածողները (Գերցեն, Օգարև, Չերնիշևսկի, Բակունին, Կրոպոտկին, Լավրով) ձգտում էին ոչ միայն բացահայտել ցարական Ռուսաստանի անարդար կարգերը, այլև ոչ պակաս անարդար՝ կապիտալիզմին բնորոշ բացասական երևույթները: Նրանք

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.11.2013:

1 Տե՛ս Платон, Собр. соч. в 4 томах, Т. 3, Москва, 1994, с. 130.

2 Г. Ю Канарш, Социальная справедливость: философские концепции и российская ситуация; Москва 2011, с. 8.

3 Տե՛ս Августин Аврелий, О граде божьем. Книга 1. Москва, 1986. с. 14.

4 Տե՛ս Руссо Ж.-Ж., Трактаты. Москва, 1969. с. 84.

5 Տե՛ս Кант И., Трактаты и письма. Москва, 1980. с. 260.

6 Տե՛ս Гегель Г.В.Ф., Энциклопедия философских наук. В 3 Т. Москва, 1977. Т 3. с. 336-337.

ներկայացրին արդար հասարակարգի մասին ռուսական իդեալի տեսական հիմնավորումները, մասամբ բացահայտեցին նաև սոցիալիզմի առավել բնորոշ առանձնահատկությունները, դրան հասնելու ուղիներն ու միջոցները<sup>7</sup>: Չնայած այս մտածողների հայացքների որոշակի ուտոպիական բնույթին<sup>8</sup>, նրանք մեծ ազդեցություն գործեցին հետագայում Ռուսաստանում ծավալված գաղափարաքաղաքական փնտրտուքի վրա:

Ռուս նարոդնիկները գտնում էին, որ ծերացած եվրոպական քաղաքակրթությունը չի կարող կառուցել արդար հասարակարգ: Ավելին՝ նման հասարակարգ կառուցելու համար նախ՝ անհրաժեշտ է անիշխանական «անպետական սոցիալիզմ» (Մ. Բակունին) կամ «անպետական կոմունիզմ» (Պ. Կրոպոտկին), ուր կապրեն ազատ և հավասար մարդիկ<sup>9</sup>:

Սոցիալական արդարության թեման իր մեկնաբանությունն ու զարգացումն ապրեց նաև 19-րդ դարի հայ իրականության մեջ: ՀՅԴ հիմնադիրները, ովքեր գտնվում էին ռուս նարոդնիկների գաղափարների որոշակի ազդեցության տակ, նույնպես անդրադարձան սոցիալական արդարության հիմնախնդրին: Նրանցից հատկապես առանձնացավ սոցիալական արդարության հետևողական ջատագով **Միմոն Զավարյանը**, ում մոտ «արդարություն» հասկացությունը կրում էր վառ արտահայտված բարոյաբանական բնութագիր: Իր աշխատություններում Զավարյանն ապացուցել է բարոյական սկզբունքների մշակման ու կիրառման հնարավորությունը, որի ձշմարտացիությունը հետագայում գիտակցվեց շատերի կողմից: Այրելով և գործելով 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ իրականության մեջ, ուր մի կողմից օսմանյան լուծն էր ծանրացել, մյուս կողմից՝ ցարականը, Զավարյանը հանդես էր գալիս ոչ միայն իբրև ավատատիրության համոզված հակառակորդ, այլև ավատական կարգերի դեմ պայքարի հետևողական մարտիկ: Ըստ Զավարյանի՝ անհրաժեշտ էր վերջ դնել այնպիսի հոռի բարքերին, ինչպիսիք էին ամեն տեսակի տուրքերի ու նվերների գանձումը, ձրի աշխատուժի բանեցումը, «...որովհետև առանց ատոր անկարելի է աշխատանքի արդիւնքը ապահովել աշխատողին, որովհետև առանց ատոր չի աւելնայ արտադրութիւնը ու հասարակական հարստութիւնը: Աւատութեան դիրքերի ոչնչացումը անհրաժեշտ է, որպէսզի պետութեան մէջ ստեղծուի խաղաղութիւն, օրէնքի գիտակցութիւն և օրինական պետութեան կազմակերպութիւն»<sup>10</sup>:

Ուշագրավ է Զավարյանի այն դիտարկումը, որ բնական աշխատատիրության, արդարության, հավասարության, ազատության սկզբունքները չեն կարող գոյություն ունենալ ավատատիրական կարգերում<sup>11</sup>: Ժամանակը թելադրում էր հրաժարվել այդ կարգերից, քանի որ նման օրինակին հետևել էին արևմտյան երկրները:

Ըստ Զավարյանի՝ «Մենք կ'երագենք, մենք կուզենք, որպէսզի մարդը զարգացնէ իր ֆիզիքական, մտաւոր, բարոյական յատկութիւնները ան-

7 Տե՛ս **Ударцев С.**. Политическая и правовая теория анархизма в России. Москва, 1994. с. 218.

8 Տե՛ս **Козлов М.**. Социальная справедливость в контексте русской традиции (социально-философский анализ). Архангельск, 2008. с. 17.

9 Տե՛ս նույն տեղում, էջ 17:

10 «**Միմոն Զավարյան**», հատ. Գ., Անթիլիաս 1997, էջ 622:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 623:

սահման կերպով»<sup>12</sup>: Սակայն պատմական հռոմեացիների նման Զավարյանն անհատի ինքնակատարելագործումը չէր սահմանափակում մի քանի «ընտրյալների» և իշխանավորների աստվածացումով: Ընդհակառակը՝ նրա համար բոլորն անհատներ են, ժողովրդական լայն խավեր, իրենց աշխատանքով ապրող զանգվածներ: Մարդու ֆիզիկական, մտավոր և բարոյական համաչափ զարգացման զավարյանական բանաձևն ուղղված էր տվյալ դարաշրջանի անարդար հասարակարգերի դեմ, որոնք կույ էին տալիս հայ աշխատավորի ողջ աշխատանքը. «...զրկված ու կեղեքուած դասերը, որ միշտ էլ ապահովել են հասարակութեան գոյութիւնը մինչև օրս. հասարակութեան հիւրը կազմող այդ խաւերը, որ հիւրը են ծառայել մարդկային ստեղծագործութեան, գուրկ են մնացել բոլոր իրաւունքներէն, երբ էապէս տէր պիտի լինէին այդ իրավունքներուն...»<sup>13</sup>:

Զավարյանը նկատում էր նաև, որ բոլոր մարդկանց, բոլոր անհատների կատարելագործումը պետք է իրականանա առանց դասի, լեզվի խտրականության: Անհրաժեշտ է յուրաքանչյուրի զարգացման համար հավասար նպաստավոր պայմաններ ստեղծել:

Դիպուկ էր նկատում Զավարյանը, որ արտագաղթի երևույթը նույնպես ուղղակորեն կապված է սոցիալական անարդարության հետ: Նրա կարծիքով՝ աղքատ Արևելքից դեպի հարուստ Արևմուտք արտագաղթը չի դադարի, քանի դեռ չի հաստատվել բոլորի համար հավասար, օրինական հասարակարգ. «Արտագաղթողները կը փախչին այսօր ազգային, կրօնական խտրութիւններէն և պաշտօնեաներու բռնութիւններէն»<sup>14</sup>: Այսօր էլ՝ Հայաստանի անկախության պայմաններում, Զավարյանի ժամանակներից շուրջ հարյուր տարի անց, հայն իր հայրենիքից հեռանում է սոցիալական անարդարության պատճառով:

Ըստ Զավարյանի՝ անհրաժեշտ է թեթևացնել հարկային բեռը, ստեղծել աշխատատեղեր, զարկ տալ արդյունաբերությանը, ապահովել հողագուրկներին հողով, արդյունքում՝ հողագուրկ չքավոր ժողովրդի մեծ մասը ստրուկից, գողից կղաճնա աշխատավոր, ազնիվ տարր և կհարստանա՝ հարստացնելով երկիրը և չի գաղթի Արևմուտք<sup>15</sup>:

Զավարյանը քննադատում էր նաև խոշոր հողատերերին, ովքեր աշխատողների շահագործումով պահում էին իրենց գոյությունը՝ բացառապես վերջիններիս հաշվին: «Դժբախտաբար, բաւական չէ ունենալ միայն «բարի» ցանկութիւն. «բարի» նպատակի համար հարկաւոր էին նաև «բարի» միջոցներ, հարկաւոր էր պաշտօնեաների և կառավարիչների «բարի» կազմ»<sup>16</sup>, -նշում էր Զավարյանը: Ցանկություն, որն այսօր էլ արդիական է, և որն այսօր էլ լուծման կարիք է զգում: Զավարյանի ապրած ժամանակներում և՛ ազդեցիկ պաշտոնյաները, և՛ պալատական արիստոկրատները, թվում է, թե ունեին «լավ» ձգտումներ, բայց որովհետև նրանք ձորտեր, հողագործներ չէին, այլ ազնվական հողատերեր և չէին հասկանում գյուղացու ցավը, բոլորն էլ բարի էին այն չափով, ինչ չափով բարի լինելը

12 Նույն տեղում, էջ 630:

13 Նույն տեղում, էջ 631:

14 «Ազատամարտ», Կ. Պոլիս, 21 մայիսի, 1911:

15 Նույն տեղում:

16 «Ալիք» օրաթերթ, Թիֆլիս, N 14, Ա. տարի, 14 մայիսի, 1906:

ներդաշնակում էր իրենց դասակարգի շահերի հետ: Զավարյանի կարծիքով՝ տարբերությունն այն է, որ Եվրոպայի մեջ կառավարությունը, պաշտոնյաները ծառայում են ժողովրդի ապահովությանը, երկրի զարգացմանն ու առաջադիմությանը, մինչդեռ Արևելքում ժողովուրդն է ծառայում պետությանը, բազմաթիվ և ապիկար պաշտոնյաներին<sup>17</sup>:

Արևելյան-ավանդական հասարակություններում քաղաքապետերն, ըստ Զավարյանի, գիտեն այդ ամենը, սակայն ձևացնում են, թե չգիտեն, ուստի չարիքի պատճառների մասին խոսելու փոխարեն գրադված են սովետություններով, ամբողջ ճշմարտությունը խոստովանելու փոխարեն՝ խոսում են ոչ էական պատճառների մասին, ավելին՝ խոսում են թղթի վրա գրված հավասարության մասին<sup>18</sup>:

Զավարյանի կարծիքով՝ Օսմանյան կայսրությունում ընդհանուր բարենորոգումների մասին խոսվել է բազմիցս, բայց ապարդյուն և անհետևանք է մնացել, որովհետև նման խոսքերը զուրկ են եղել գործնական քայլերից, ձևակերպված չեն եղել այնպիսի որոշակի պահանջների տեսքով, որոնց գործադրումն անխուսափելիորեն դրական արդյունք կտար:

Երկրի հիմնական չարիքի՝ անարդարության հիմքում տեսնելով անապահովությունն ու ապիկար վարչական կազմը, Զավարյանն առաջարկում էր ունենալ կարող կառավարիչներ, անաչառ դատավորներ, աչալուրջ ոստիկանություն, այլապես ապահովությունը, խաղաղությունը և երկրի բնականոն զարգացումը կմնան լոկ երազանք: Քանզի միշտ էլ եղել են «կարող և անաչառ» կառավարիչներ, դատավորներ, ոստիկաններ, զինվորականներ, բայց և այնպես դրությունը մնացել է նույնը<sup>19</sup>: Փաստորեն մեծ մտածողը սոցիալական անարդարության ծնունդ էր համարում նաև ապիկար իշխանությանը, որը ոչ միայն անհավասարության աղբյուր է, այլև երկրի տնտեսական ու սոցիալական զարգացման ցածր մակարդակի պատճառ:

Ուշադրության է արժանի նաև Զավարյանի այն տեսակետը, որ անարդարության պատճառներից է սխալ, ոչ համարժեք հարկահանությունը: Արժանին կարելի է մատուցել Զավարյանի այն առաջարկին, որով դեռևս հարյուր տարի առաջ խոսում էր պրոգրեսիվ հարկի մասին<sup>20</sup>, մի երևույթի, որն այսօր մեզանում կրկին արդիական թեմա է, և ինչու ոչ՝ օրակարգային: Պարզ է, որ նույն չափով տուրքը հարուստի, ունևորի, միջակի և աղքատի համար միևնույնը չէ: Օրինակ՝ 10 % տուրք վճարելով՝ հարուստը ոչ մի ծանրություն չի գգում, իսկ ունևորը չի տուժում, միջակը զրկվում է մի քանի հարմարություններից, աղքատը՝ ամենաանհրաժեշտից: Ահա թե ինչու Եվրոպայում շատ երկրներ անցել էին պրոգրեսիվ հարկահանության սկզբունքին, ինչի արդյունքում ԱՄՆ-ի և Անգլիայի պետական եկամուտների շուրջ 30%-ը ստացվում էր ունևորներից՝ պրոգրեսիվ հարկման արդյունքում: Ուստի հասկանալի է, թե ինչու էր Զավարյանը պրոգրեսիվ տուրքի ձևը համարում արդարացի<sup>21</sup>:

17 Տե՛ս «Ազատամարտ», օրաթերթ, Կ. Պոլիս, N 1041, Դ տարի, 22 հոկտեմբերի 1912:

18 Տե՛ս Նույն տեղում:

19 Տե՛ս «Ազատամարտ», օրաթերթ, Կ. Պոլիս, N 1042, Դ տարի, 22 հոկտեմբերի, 1912:

20 Տե՛ս նույն տեղում:

21 Տե՛ս «Մուրճ», ամսագիր, Թիֆլիս, 1901, N 10, էջ 219:

Պրոգրեսիվ տուրքը արդարացի էր այնքանով, որքանով որ չբավորներին ամբողջապես ազատում էր հարկերից, ինչն ընչագուրկին հնարավորություն էր ընձեռում ոտքի կանգնել և կամաց-կամաց ցածր խավից վերածվել միջին խավի: Սոցիալական արդարության հիմնասյուներից մեկն էլ հենց այս սկզբունքն է, որի միջոցով ընկերային շերտերում տեղի են ունենում փոփոխություններ: Եթե աղքատը կարող է իր աշխատասիրության շնորհիվ դառնալ միջին կամ հարուստ խավ, ապա հակառակը նույնպես օրինաչափ պետք է լինի. անբան հարուստը պետք է դառնա աղքատ:

Զավարյանը կոշտ քննադատության էր ենթարկում նաև մարդկանց առևտուրը, երևույթ, որն այսօր էլ մեծ հնչեղություն ունի: Թեպետ հարկավոր են եղել հազարավոր տարիներ, որպեսզի մարդը դադարի լինել առևտրի առարկա, բայց այսօր էլ նման երևույթը գոյություն ունի: Գերի վերցնելը կամ մարդկանցով տուրք վճարելը ամենատարածված միջոցն էր ողջ համաշխարհային պատմության ընթացքում<sup>22</sup>: 1812 թ. սովի ժամանակ Քութայիսի ռուս նահանգապետը գանգատվում էր բարձր իշխանությանը, որ չի կարողանում արգելել մարդկանց առևտուրը, որովհետև սոված ծնողները վաճառում են իրենց երեխաներին հարևան գավառներում<sup>23</sup>: Անշուշտ, սոցիալական արդարության բացակայության պատճառով է, որ թրաֆիկինգի երևույթը շարունակվում է նաև մեր օրերում:

Զավարյանը առանձնահատուկ ուշադրության էր արժանացնում կրթության հարցը, հատկապես՝ կանանց (աղջիկների) ներգրավվածությունը. «Արդեօք մեր պարտքը չէ՞ այսօր նոր զարկ տալ հայ կանանց հասարակական գործունեության, արդեօք մեր օգուտը չէ՞, որ հայ հասարակության կէտը դուրս գայ խոհանոցների ու փալասների նեղ շրջանից և փոխարինել տղամարդկանց այն ասպարեզներում, որոնք համապատասխանում են իրենց ընդունակություններին»<sup>24</sup>: Անհրաժեշտ էր հայ կանանց և աղջիկներին դուրս բերել կիսահարեմային վիճակից, ինչի սկիզբը կարող էր լինել կրթական ոլորտը: Իսկ հետագայում հասարակությունը նրանց կարող էր տալ աշխատանքի հավասար իրավունք:

Ինչ վերաբերում է ուսանողությանը, ապա Զավարյանը պահանջում էր հայ ուսանողությունից այցելել հայկական բնակավայրեր, ապրել և շփվել հայ աշխատավորների հետ, ուսումնասիրել նրանց կյանքի պայմանները, որից հետո միայն կազմել ծրագրեր, որոնք միտված կլինեին հայ աշխատավորության վիճակի բարելավմանը. «Ամէնուրեք և մանաւանդ հայերի ապրած վայրերում պահանջել և ուժով ձեռք բերել խղճի-խօսքի ազատութիւն, անհատի և ազգութիւններու կատարեալ հաւասարութիւն, որոնք միայն կարող են թուլացնել ազգային ու դասակարգային կոիւները...»<sup>25</sup>: Դիմելով հայ ուսանողներին և աշակերտներին, Զավարյանը պահանջում էր, որպեսզի տարբեր միջոցներով (ցույցեր, պատերազմ, անհարեկչություն և այլն) ոչնչացնեն այն հատուկ արտոնությունները,

22 Տե՛ս История торговли людьми и рабства, www.boh-clan.ru.

23 Տե՛ս «Մուրճ», ամսագիր, Թիֆլիս, 1901, N 8, էջ 218:

24 «Ալիք», օրաթերթ, Թիֆլիս, N 5, Ա տարի, 3, մայիսի, 1906:

25 «Միմոն Զաւարեան», հատ. Ա., Պէրյուք, 1983, էջ 139:

որոնք վայելում են ազնվականները, հոգևորականները, ռուսադավանները, կամ էլ այդ արտոնությունները տալ բոլորին՝ հավասարության սկզբունքով և առանց խտրականության:

Խիստ ուշագրավ է Ջավարյանի մատնանշած սոցիալական արդարության ուղղակի կապը ազգային հարցի հետ: Հայակեր ռեժիմը դատապարտել էր հայ մանուկ սերնդին իր կրթությունը ստանալ օտար լեզվով՝ վճարելով կողմնակի տուրք, որն իր ծանրությամբ պակաս չէր պետությանը վճարվող ընդհանուր տուրքից<sup>26</sup>: Ամեն մի հայ երեխա տանից դպրոց գնալիս զգում էր ոչ միայն նոր լեզու սովորելու ծանրությունը, այլև անոթն ու գարշանքը: Քանի որ, ըստ Ջավարյանի, նա ստորանում էր, տեսնելով, որ իրեն արգելված է մայրենի բարբառի օգտագործումը, որի փոխարեն ստիպված պետք է գործածեր օտար լեզուներ: Կրթություն ստանալով օտար լեզվով՝ հայ երեխան կամաց-կամաց կտրվում էր իր ազգից, մոռանում էր իր երկրի պայմաններն ու պահանջները, դառնում օտար: Ցավալին, սակայն, այն էր, որ օտարանալով՝ հայ երիտասարդը կորցնում էր ոչ միայն ազգային ինքնագիտակցությունը, այլև իբրև մարդ անկարող էր լինում զարգացնել իր ընդունակություններն ամբողջությամբ: Ջավարյանի կարծիքով, հարկավոր է, որ հայ երեխան կրթությունը ստանա մայրենի լեզվով, դա է պահանջում, թե՛ առողջ մանկավարժությունը, թե՛ հայ ժողովրդի գոյությունն ու առաջադիմությունը: Ուստի եզրակացնում էր. «Ուրեմն հաստատենք նա [կրթությունը] մայրենի լեզուի հողի վրայ, տանենք նա հաւասարապէս կանանց հետ միասին, վարենք նա ընտրուած և միմիայն ընտրուած խորհուրդների միջոցով»<sup>27</sup>:

Ջավարյանն իր հողվածներում մեծ տեղ է հատկացրել նաև խոշոր սեփականության և արդարության հարաբերակցությանը՝ մատնանշելով, որ մասնավոր սեփականությունը (նկատի ունենալով հատկապես խոշոր հողատերերին) սահմանափակում է անհատի զարգանալու հնարավորությունները: Նրա կարծիքով՝ այդ անդունդը ժամանակի ընթացքում ավելի է խորանում՝ անհավասարությունը դարձնելով ավելի ուժեղ և թույլ չի տալիս բարոյական զարգացման արդյունավետ իրականացումը: Անհատի (սեփականատիրոջ) և հասարակության (գյուղացի, բանվոր) հակադրությունը ծնում էր նաև այլ վտանգավոր երևույթներ. «Շնորհիւ առաջ եկած ծայրայեղ անհաւասարութեան, չունևորները դարձել են ունևորների պարտապան. ծախում են իրանց ունեցած-չունեցածը, դարձել են նրանց ծառաներն ու հլու հպատակները»<sup>28</sup>: Անշուշտ, ինչպէս կարող էր խոսք լինել սոցիալական արդարության մասին, երբ մի հարուստի ձայնը ավելի լսելի էր, քան տասնյակ աշխատասեր, բանիմաց, խելոք, բայց աղքատ գյուղացիներինը:

Անդրադառնալով մեծամասնության ձայնի գերակայության և փոքրամասնության իրավունքների հարգման փոխկապակցված սկզբունքներին՝ Ջավարյանը նկատում է. «...չպետք է մոռանալ, որ մեծամասնութեան կամքն իսկ ենթակայ է լինելու որոշ սահմանափակումների, աչքից թողնում

26 Տե՛ս «Ալիք», օրթ, Թիֆլիս, N 4, Ա . տարի, 30 ապրիլի 1906:

27 «Ալիք», օրթ., Թիֆլիս, N 5, Ա. տարի, 3 մայիսի, 1906:

28 Տե՛ս «Մուրճ» ամս., Թիֆլիս, 1901, N 9, էջ 216:

ենք, որ կան իրաւունքներ, որոնց բռնաբարելը մեծամասնութեան կողմից միայն ոճիւր կարելի է համարել»<sup>29</sup>: Այստեղ մեծ մտածողը նկատի ունի անհատի հավասարութիւնը, խղճի ազատութիւնը: Դրանք այնպիսի անժխտելի և սուրբ իրավունքներ են, որոնց ոտնահարելը հանցագործություն է:

Միաժամանակ՝ ոչ մի բազմամարդ ազգ իրավունք չունի բռնանալու և ճնշելու փոքր ազգերի լեզուն, մշակույթը, իրավունքները<sup>30</sup>: Ուշագրավ է, որ Զավարյանից տասնամյակներ անց արևմտյան քաղաքագետները (Ռ. Դալ, Ֆ. Շմիտեր, Տ. Կարլ) սոցիալական արդարության և ժողովրդավարության հարցերը քննարկելիս բախվել են հենց վերոնշյալ խնդիրներին<sup>31</sup>: Զավարյանն այս համատեքստում անդրադարձել է նաև մարդու իրավունքների և սոցիալական արդարության հարաբերակցության խնդրին, որը տասնամյակներ անց պետք է տեղ գտներ միջազգային փաստաթղթերում<sup>32</sup>:

Հատկանշական է նաև Զավարյանի անդրադարձը հայ գյուղացուն և բանվորին հետաքրքրող խնդիրներին: Նա գտնում էր, որ նախ՝ անհրաժեշտ է գյուղերում ընտրել խորհուրդներ (սա, կարծում ենք, ներկայումս ՀՀ-ում գործող ավագանու ինստիտուտն է), որին պետք է վերապահվի համայնքի համար նոր հողերի գնման լիազորությունը, ջրանցքների և աղբյուրների կառուցումը, նոր ճանապարհների, գրադարանների, բաղնիքների, կրթական-կրոնական հաստատությունների, դեղատան բացումը և այլ լիազորություններ<sup>33</sup>: Այնուհետև Զավարյանը կարծում էր, որ անհրաժեշտ է պաշտպանել համայնական հողատիրության սկզբունքը՝ կանոնավորելով հողաբաշխումը, որպեսզի այն կատարվի ընտանիքներին համապատասխան: Հատուկ հանգանակության միջոցով պետք է օգնել համայնքի թույլ և չքավոր ընտանիքներին, ովքեր տուժել են բնության արհավիրքներից կամ էլ դժբախտ պատահարներից: Փաստորեն Զավարյանը պետական որոշ գործառնությունների իրականացումը հնարավոր էր համարում համայնքների խորհուրդների միջոցով (առաջարկ, որը կիրառվում է մեր օրերում ՏԻՄ-երի միջոցով): Եվ վերջապես, անդրադառնալով քաղաքային բանվորների խնդիրներին, Զավարյանը առաջարկում էր բարձրացնել նրանց աշխատավարձը՝ կրճատելով աշխատանքային ժամաքանակը, բարելավել բանվորների աշխատանքային պայմանները, կազմակերպել սպառողական և արդյունաբերական հաստատություններ ընկերական հողի վրա, խնայել ֆինանսական միջոցներ հիվանդության, անգործության, գործադուլների և այլ դեպքերի համար, ինչպես նաև ունենալ ներկայացուցիչներ գործարանների ղեկավար կազմում, որպեսզի բանվորների խնդիրները ներկայացվեն տնօրինությանը<sup>34</sup>:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսն իր հողվածներում

29 «Ալիք», օրաթերթ, Թիֆլիս, N 24, Ա. տարի, 26 մայիսի, 1906:

30 Տե՛ս «Միտն Զաւարեան», հատ. Գ., Անթիլիաս 1997, էջ 354:

31 Տե՛ս **Карл Т.Л., Шмитер Ф.**, Что есть демократия?, www.politnauka.ru., Далл Р., Полиархия, плюрализм и пространство., www.gumer.info.

32 Տե՛ս www.ilo.org:

33 Տե՛ս «Միտն Զաւարեան», հատ. Ա., էջ 140:

34 Տե՛ս նույն տեղում, էջ 142:

և նամակներում լրջագույն ուշադրության է արժանացրել սոցիալական արդարության հիմնահարցը: Ջավարյանը ձգտում էր ոչ միայն բացահայտել այն արատներն ու սխալները, որոնք գոյություն ունեին Արևմտյան և Արևելյան Հայաստաններում՝ օսմանյան Թուրքիայի և ցարական Ռուսաստանի կառավարման արդյունքում, այլև բանաձևել տեսական ու գործնական այն առաջադրանքները, որոնց իրագործումը պետք է հանգեցնեի նոր և արդար համակարգի՝ սոցիալիզմի հաստատմանը:

Թեպետ մեծ մտածողը կյանքից շուտ հեռացավ, բայց նրա թողած տեսական հարուստ ժառանգությունն ու սոցիալական արդարության մասին պատգամները հետագա տասնամյակներում շարունակեցին զարգացնել Առաջին Հանրապետության տարիներին և Սփյուռքում իրենց գործունեությունը ծավալած Միքայել Վարանդյանը և Վահան Նավասարդյանը:

## Summary

### **ZAVARYAN AS APOLOGIST OF SOCIAL JUSTICE**

Arthur S. Ghazaryan

The article is a brief reference to the positions of Simon Zavaryan (one of the founders of AR Federation) concerning social justice. Living and taking his activities at the late 19th and early 20th centuries, when on one part Armenia was under the pressure of the Ottoman Empire and on the other part under the pressure of tsarist Russia, Zavaryan was not only against feudalism, he was really struggling against feudalistic system. One of Zavaryan's ideas was that the development of the individual person should go on without the distinction of the class of language. Favorable conditions should be created for the development of every single person. In his articles Zavaryan also mentioned the importance of the correlation of justice and personal property; he thought that the concentration of too much property prevents the development of the individual.

The article also presents the means and ways suggested by Zavaryan that will lead to a fair society: to the establishment of socialism.